



CENTER FOR  
CURRICULUM  
REDESIGN

Making Education *More* Relevant

Ուսումնական Ծրագրերի Վերանայում  
ըստ

# 21<sup>րդ</sup> Դարի Կրթության պահանջների

The CCR Foundational White Paper

[www.curriculumredesign.org](http://www.curriculumredesign.org)

© Charles Fadel / Center for Curriculum Redesign – 2020 All Rights Reserved


21-րդ դարում մարդկությունը հայտնվել է մի շարք մարտահրավերների առաջ. հասարակական (կլիմայի փոփոխություն, ֆինանսական անկայություն, պանդեմիաներ և այլն), տնտեսական (գլոբալիզացիա, նորարարություն և այլն) և անհատական մակարդակներում (աշխատանքի ընդունվելու հնարավորություն, գաղտնիություն, կատարողականություն): Տեխնոլոգիաների էքսպոնենցիալ աճն արագորեն բարդացնում է պրոբլեմները շնորհիվ ավտոմատացման և խնդիրների օֆշորինգի, առաջացնելով հասարակական լարվածություն: Կրթությունը հետ է մնում տեխնոլոգիական առաջընթացի տեմպերից, ինչպես դա եղել է Ինդուստրիալ հեղափոխության<sup>1</sup> ժամանակ:

Կրթական ծրագրերի<sup>2</sup> վերջին մեծ փոփոխությունը կատարվել է 1800-ականներին՝ պայմանավորված հասարակական և մարդկային կապիտալի կարիքների կտրուկ աճով: Քանի որ 21-րդ դարի աշխարհը էականորեն տարբերվում է նախկինից, կրթական ծրագրերն ըստ այդմ պետք է ենթարկվեն խոշոր փոփոխությունների, ընդգծելով խորությունն ու ճկունությունը: Աշխարհում ուսումնական պլանները, իհարկե, երբեմն զգալիորեն շտկվել են, բայց երբևէ չեն վերափոխվել *խորապես* ըստ կրթության բոլոր չափայնությունների՝ Գիտելիք, Հմտություններ, Բնավորություն և Մետաուսուցում: 21-րդ դարի կարիքներին հարմարվելը նշանակում է վերանայել յուրաքանչյուր հարթությունը և դրանց փոխազդեցությունը:

---

<sup>1</sup> Goldin, C. & Katz, L. (2009). *The race between education and technology*. Harvard University Press.

<sup>2</sup> Երկրից կախված կոչվում են նաև «ստանդարտներ», «ծրագրեր» և այլն: Բնագրում կիրառվում է «կուրիկուլում» եզրույթը:



## Գիտելիք՝ “Ինչը գիտենք և հասկանում ենք”

Գիտելիքն այն չափայնությունն է, որն առավել ընգծվածն է ավանդական կրթական ծրագրերում և ուսումնական պլաններում: Այնուամենայնիվ, հավաքական գիտելիքը մեծանում է, իսկ կրթական ծրագրերը չեն հասցնում նրա հետևից: Կրթական ծրագրերը հաճախ *ռելեվանտ* չեն ոչ ուսանողների տեսանկյունից (ինչն արտացոլվում է նրանց սակավ ընդգրկվածությամբ և մոտիվացիայի անբավարարությամբ), ոչ էլ հասարակական և տնտեսական կարիքների տեսանկյունից: Հետևաբար, խիստ կարիք կա վերանայելու նշանակությունը և կիրառելիությունը նրա, թե *ինչ* է դասավանդվում՝ միաժամանակ շտկելով տեսականի և գործնականի հաշվեկշիռը:

Ավանդական դիսցիպլինները (մաթեմատիկան, մայրենի և օտար լեզուները, հասարակագիտությունը, արվեստը և այլն) իհարկե անհրաժեշտ են: Դժվար որոշումներ պետք է կայացվեն կրճատումների վերաբերյալ, որոնք հնարավորություն կտան առավել կենտրոնանալ համապատասխան ոլորտում առանցքային հարցերի վրա (օրինակ՝ մաթեմատիկայում ավելացնել վիճակագրությունն ու հավանականությունների տեսությունը և նվազեցնել եռանկյունաչափությունը), որը սակայն, զուգահեռաբար պետք է ներառի անհրաժեշտ խորություն: Այն իր հերթին կպարարտացնի մյուս երեք չափայնությունները (հմտություններ, բնավորություն, մետաուսուցում): Արդի դիսցիպլինները (ինչպիսիք են տեխնոլոգիաները և ինժեներությունը, մեդիա, ձեռներեցություն և բիզնես, սոցիոլոգիական գիտություններ) համապատասխանում են ներկայի և ապագայի պահանջներին և պետք է դիտարկվեն որպես կրթական ծրագրի բնականոն բաղադրիչ, այլ ոչ որպես հավելյալ կամ օժանդակ առարկաներ:

**Միջդիսցիպլինարությունը** ամուր կապակցող մեխանիզմ է ավանդական և արդի դիսցիպլինների միջև: Այս սկզբունքի կիրառումը կարող է էականորեն ազդել Հմտությունների, Բնավորության և Մետաուսուցման վրա, ինչպես նաև շեշտադրում է փոխադրելիությունը: Միջդիսցիպլինար մոտեցումները գիտելիքի հանդեպ կօգնեն սովորողներին ստեղծել կապեր հարացույցերի միջև՝ հեշտացնելով ավելի խորքային ուսումը:

**Ուսուցման առաջխաղացումները** պարզաբանում են, թե ինչպես են ուսանողները զարգացնում իրենց ընկալումները ժամանակի ընթացքում: Դրանք կարող են լինել շատ մեծ կամ շատ փոքր: Որոշ առաջադիմություններ նպաստում են նաև մյուսների աճին: Մեծամասամբ ուսուցման առաջխաղացումները հիմնվում են հետազոտությունների վրա: Այնուամենայնիվ, անբավարար հետազոտական հենքի դեպքում բացերը կարելի է լրացնել տրամաբանական կարգով:

**Հիմնարար հարացույցերն** ընդգծում են ստանդարտների հիմքում ընկած ինֆորմացիայի կոնցեպտուալ կառուցվածքը՝ վերհանելով այն գաղափարական տեղաշարժերը, որոնք ուսումնառողները պետք է կատարեն ինդուկտիվ դաստոգության միջոցով՝ ելնելով նրանց ներկայացված բոլոր օրինակներից: Դիսցիպլինար գործընթացների կարևոր և բարդ շրջանակները (հարցման ցիկլը, ուշադիր ընթերցումը<sup>3</sup>) հաճախ դժվար է միանգամից սովորեցնել, դրանք կարող են դիտարկվել որպես Դիսցիպլինար մակարդակի հիմնարար կոնցեպտներ:

**Թեմաները** աշխարհը դիտելու եղանակներ են, որոնք ունեն ժամանակակից կարևորություն: Դրանք ներառում են Գլոբալ Գրագիտություն, Բնապահպանական Գրագիտություն, Տեղեկատվական Գրագիտություն, Թվային Գրագիտություն, Համակարգային Մտածողություն<sup>4</sup>, Դիզայնի Մտածողություն, Քաղաքացիական Գրագիտություն և Համակարգչային Գրագիտություն:

## Հմտություններ<sup>5</sup>՝ ինչպես ենք օգտագործում մեր իմացածը

Բարձր մակարդակի հմտությունները (Կրեատիվություն, Քննադատական մտածողություն, Կոմունիկացիա, Համագործակցություն, հայտնի են նաև որպես «21րդ դարի հմտություններ»<sup>6</sup>) առանցքային դեր ունեն ինչպես խորը ուսուցման համար, այնպես էլ կատարելու միջոցով ընկալումը ցուցաբերելու համար<sup>7</sup>: Սակայն, առայժմ ուսումնական ծրագրերը գերբեռնված են բովանդակությամբ, դժվարացնելով ուսանողների կողմից Հմտությունների ձեռքբերումը, իսկ դասավանդողների կողմից դրանց ուսուցանումը:

Բացի այդ, դասավանդողները հաճախ պակաս աջակցություն են ստանում մշակելու այնպիսի մանկավարժական մեթոդներ, որոնք կնպաստեն գիտելիքի և հմտությունների փոխկապացված յուրացման, առավել խորն ուսուցման իրագործման: Այնուամենայնիվ, առկա է ողջամիտ գլոբալ համաձայնություն առ այն, թե ինչն է Հմտություններն ամենալայն մակարդակում, և թե ինչպես տարբեր մանկավարժական մոտեցումներ (օրինակ՝ նախագծեր) կարող են ազդել դրանց ձեռքբերման վրա:

<sup>3</sup> Ուշադիր ընթերցում կամ մոտ ընթերցում

<sup>4</sup> Systems thinking – երբեմն թարգմանվում է որպես համակարգային մոտեցում, համակարգերի տեսություն և այլն

<sup>5</sup> Անգլերենում այստեղ կիրառվում է “Skills” եզրույթը, որը տարբեր նրբերանգներ ունի տարբեր լեզուներում բառացի թարգմանելիս: Որոշ դեպքերում կարող է փոխարինվել «կոմպետենտություններով»:

<sup>6</sup> Trilling, B. & Fadel, C. (2009). 21st Century Skills. Wiley — [www.21stcenturyskillsbook.com](http://www.21stcenturyskillsbook.com)

<sup>7</sup> The Conference Board’s “Are they really ready to work?”; AMA “Critical skills survey”; PIAAC program (OECD); etc.

**Հմտություններ  
Ինչպես ենք օգտագործում իմացածը**

Կոմպետենցիա	Ենթակոմպետենցիա	Ներառում է
<b>Կրթատվություն<sup>8</sup></b>	ԿՐԵ1. Նոր գաղափարների զենեքացիա և փնտրում	Երևակայությունը Հնարամտությունը
	ԿՐԵ2. Անձնական ճաշակի և էսթետիկայի մշակում	
	ԿՐԵ3. Վտանգների, անորոշության և ձախողման դյուրընդունում	
	ԿՐԵ4. Գաղափարների կապակցում, վերակառուցում, շտկում՝ դրանց վերածելով կապակցված ամբողջականության	
	ԿՐԵ5. Սահմանափակումները ճանաչելուն զուգահեռ գաղափարների իրականացում	
	ԿՐԵ6. Գործընթացների և արդյունքների հանդեպ ռեֆլեքսիա	
<b>Քննական մտածողություն</b>	ՔՆՆ1. Տեղեկատվության նույնականացում, պարզաբանում, կազմակերպում	Իսնդիքների լուծումը Վերլուծությունը Դատողությունը
	ՔՆՆ2. Այլ տեսակետների դիտարկում	
	ՔՆՆ3. Որոշում կայացնելիս առողջ դատողության կիրառում	
	ՔՆՆ4. Տեղեկատվության ճշգրտության և որակի գնահատում	
	ՔՆՆ5. Այլոց դատողությունների, ենթադրությունների վերաբերյալ քննադատական ռեֆլեքսիա	
<b>Հաղորդակցություն</b>	ՀԱՂ1. Հարցեր տալը և ակտիվ լսելը	Երկխոսելը Լսելը Իսոսելը
	ՀԱՂ2. Գաղափարների կամ մտքերի պարզ և հակիրճ ձևակերպում	
	ՀԱՂ3. Ոչ վերբալ և պարալինգվալ հաղորդակցման կիրառում և ըմբռնում	
	ՀԱՂ4. Հաղորդակցման տարաբնույթ միջոցների տիրապետում (թվային, բանավոր և այլն)	
	ՀԱՂ5. Լսարանի հետ էմպաթիկ հարաբերության հաստատում, մեսիջի համապատասխան մատուցում	
<b>Համագործակցություն</b>	ՀԱՄ1. Այլոց հետ միասին պատասխանատվության ստանձնում	Համագործակցելը Թիմային աշխատանքը Համախմբվելը
	ՀԱՄ2. Յուրաքանչյուր անհատի հմտությունների և հնարավորությունների օգտագործում	
	ՀԱՄ3. Միջանձնային կոնֆլիկտների խուսանավում և հաշտեցում	
	ՀԱՄ4. Կառուցողական հետադարձ կապի տրամադրում և ստացում	
	ՀԱՄ5. Թիմի անդամների հետ էմպաթիկ հարաբերությունների հաստատում	

<sup>8</sup> Կարող է թարգմանվել նաև ստեղծագործական հմտություններ կամ ստեղծագործականություն (թարգմ.)

## Բնավորություն<sup>9</sup> Ինչպես ենք վարվում և փոխազդում աշխարհի հետ

Հմտություններից և գիտելիքից զատ այլ որակների կարիքը հարաճող տեմպերով շեշտավորվում է ողջ աշխարհում: Առավել հաճախ դիտարկվում է երեք ընդհանրական նպատակ, որոնց կարելի է հասնել բնավորություն կրթելով.

- ձևավորել ցկյանս ուսուցման հիմքերը,
- աջակցել տանը, հանրության մեջ և աշխատավայրում հաջողակ հարաբերությունների զարգացմանը,
- զարգացնել գլոբալիզացվող աշխարհում կայուն մասնակցություն ապահովող արժեքներ և արժանիքներ:

CCR-ը (Ուսումնական ծրագրերի վերամշակման կենտրոնը) մշակել է 40-ից ավելի շրջանակներ, հետազոտություններ և հետադարձ կապեր<sup>10</sup> ամբողջ աշխարհից, որի արդյունքում ձևակերպել է Բնավորության վեց հիմնարար որակներ, որոնցից յուրաքանչյուրը ներառում է առնչակից հասկացությունների բավական լայն սպեկտր: Այդ որակներն են Գիտակցվածությունը, Հետաքրքրասիրությունը, Համարձակությունը, Տոկունությունը, Էթիկան և Առաջնորդությունը, որոնց մեջ կարող են տեղավորվել այլ որակներ և կոնցեպտներ: Բնավորության ուսուցանումը կարող է հաճախ կատարվել արտալսարանային պայմաններում, օրինակ՝ սպորտային միջոցառումների, արշավների, ճամբարների, արկածային խաղերի միջոցով, որոնք նաև մեծացնում են մարտահրավերը:

---

<sup>9</sup> Այս չափանիշները տարաբնույթ իմաստներ ունի տարբեր ոլորտներում՝ բարդացնելով միակերպ ընկալումը: Բնավորության չափանիշները ներառում է մի շարք հասկացություններ՝ ազդեցություն, վերաբերմունք, վարք, հանգստություններ, ընդգրկում, հակումներ, մտածելակերպ, անհատականություն, խառնվածք, արժեքներ, հասարակական և Էնոցիոնալ հմտություններ, ոչ կոգնիտիվ հմտություններ և փափուկ հմտություններ: Չնայած նրան, որ բնավորություն եզրույթը հաճախ ունի ոչ կրթական ենթատեքստ, այնուամենայնիվ, հակիրճ և ընդգրկուն տերմին է, ճանաչելի բոլոր մշակույթների համար:

<sup>10</sup> Ներառում է ավելի քան 500 ուսուցիչ

# Բնավորություն

Ինչպես ենք վարվում և փոխազդում աշխարհի հետ


Կոմպետենցիա	Ենթակոմպետենցիա	Ներառում է
<b>Գիտակցվածություն</b>	ԳԻՏ1. Ներկա պահին սեփական մարմնի, հույզերի և ռեակցիաների ըմբռնում	Ինքնագիտակցություն Ներկայություն Ինքնատիրապետում
	ԳԻՏ2. Նկարագրման միջոցով հույզերի և ռեակցիաների ընկալում	
	ԳԻՏ3. Ներքին ապրումների կարգավորմանն ուղղված արդյունավետ սովորությունների ձևավորում	
	ԳԻՏ4. Դրական տրամադրվածություն, լայնախոհություն, համբերություն և կարեկցանք	
<b>Հետաքրքրասիրություն</b>	ՀԵՏ1. Խորն ըմբռնման ձգտում	Լայնախոհություն Քննասիրություն Հետազոտականություն
	ՀԵՏ2. Նորությունների ձգտում, նորը փորձելու հակում	
	ՀԵՏ3. Ընկալման ընդլայնման համար տարբեր տեսանկյուններից դիտարկման ձգտում	
	ՀԵՏ4. Սեփական հետաքրքրությունների և կրքերի հետամուտ լինելը	
<b>Համարձակություն</b>	ՀԱՄ1. Հավակնոտ նպատակների հետապնդում՝ անկախ հասարակական, ֆինանսական, ֆիզիկական կամ հուզական վտանգներից	Քաջություն Վստահություն Ռիսկի դիմում
	ՀԱՄ2. Սեփական արժեքների համար պայքարի պատրաստականություն	
	ՀԱՄ3. Այլոց հետ խոցելի համագործակցության մեջ ներգրավվում	
<b>Տոկունություն</b>	ՏՈՎ1. Ճկուն հարմարվողականություն	Հաստատականություն Համառություն
	ՏՈՎ2. Անուր սոցիալական կապերի կառուցում	
	ՏՈՎ3. Սթրեսի դիմակայում և հույզերի ադեկվատ արտահայտում	
	ՏՈՎ4. Նպատակալացությունը	
	ՏՈՎ5. Մարտահրավերների սևեռում հաղթահարում, սակայն կարիքի դեպքում օգնության դիմելու պատրաստականություն	
	ՏՈՎ6. Մարտահրավերների սևեռում հաղթահարում, սակայն կարիքի դեպքում օգնության դիմելու պատրաստականություն	
<b>Էթիկա</b>	ԷԹԻ1. Էթիկական կոնցեպտների նույնականացում և նկարագրություն	Ամբողջականություն Արդարություն Առաքինություն
	ԷԹԻ2. Էթիկական որոշումների կայացում և էթիկական քայլերի իրագործում	
	ԷԹԻ3. Այլոց էթիկական տեսանկյունների ընկալում	
	ԷԹԻ4. Արժեքների, իրավունքների (քաղաքացիական) և պատասխանատվությունների ընկալում և գնահատում	
<b>Առաջնորդություն</b>	ԱՌԱ1. Մարտահրավերների որոշում և նպատակադրում	Պատասխանատվություն Որոշման կայացում
	ԱՌԱ2. Իշխանության բարոյական տնօրինում	
	ԱՌԱ3. Ռ-ազմավարական մտածողություն՝ ռեսուրսների (մարդկային և նյութական) լավագույն օգտագործմամբ	
	ԱՌԱ4. Թիմային վերջնարդյունքների գնահատում և համապատասխան հարմարեցում	
	ԱՌԱ5. Այլոց հետ հարգալից համագործակցում	
	ԱՌԱ6. Ներդրում ավելի մեծ խմբին կամ հանրությանը	
	ԱՌԱ7. Սեփական տեսլականով կիսվելը և ուրիշներին ոգեշնչելը	



# Մետաուսուցում՝ ինչպես ենք ռեֆլեքսում, հարմարվում և սովորում, թե ինչպես սովորել

CCR-ի շրջանակի չորրորդ և վերջին չափանությունը որոշակիորեն վերածածկում է մյուս երեքը: Մետաուսուցումը վերաբերում է այն պրոցեսներին, որոնք առնչվում են ռեֆլեքսիային և սեփական ուսուցման ըստ այդմ համապատասխանեցմանը: Այն ներառում է **մետագիտակցությունը** (սեփական ուսուցման կանխատեսում, մշտադիտարկում և գնահատում), ինչպես նաև սեփական կարողությունների վերաբերյալ Աճի Մտածողության որդեգրումը:

Մետաուսուցումն առանցքային դեր ունի ցկյանս ուսուցման մշակույթ ձևավորելու և մյուս 3 չափանություններում ուսուցման համար ու ապահովում է ուսուցման փոխանցումը իր ելքային համատեքստից անդին: Առավել հաջողակ ուսանողները շատ հաճախ արդեն իսկ ներառնվում են Մետաուսուցման **արգասաբեր** ցիկլի մեջ, և այդ չափանության **միտումնավոր** խրախուսումը կարող է օգնել բոլոր ուսանողներին ուսուցման բոլոր ոլորտներում նրանց ողջ կյանքի և կարիերայի ընթացքում: Անդադար և մեծացող արագությամբ հարմարում պահանջող մեր աշխարհում այս չափանության գիտակցված շեշտավորումը, այլ ոչ թե նրա ենթադրումն ու, այդպիսով, հաճախ անտեսումը, վճռական նշանակություն ունի:



## Մետաուսուցում

Ինչպես ենք ռեֆլեքսում և հարմարվում

Կոմպետենցիա	Ենթակոմպետենցիա	Ներառում է
<b>Մետագիտակցություն</b>	ՄԵՏ1. Գործընթացների, նվաճումների, ուսուցման և/կամ նույնականացման վերաբերյալ ռեֆլեքսիա	Մտորումը Մտածելը Ինքնառեֆլեքսիան
	ՄԵՏ2. Նպատակների, դրանց հասնելու պլանների որոշում, սեփական առաջադիմության մշտադիտարկում	
	ՄԵՏ3. Ըմբռնման մշտադիտարկում և տեղեկատվության պատշաճ տնօրինում	
	ՄԵՏ4. Սեփական գործողությունների և դրանց հետևանքների գնահատում	
	ՄԵՏ5. Այլընտրանքների և տարաբնույթ հեռանկարների դիտարկում	
	ՄԵՏ6. Իրագեկվածության վարժեցում և ներքին վիճակի կարգավորում	
	ՄԵՏ7. Ճկուն մտածողություն և հարմարվողականություն	
<b>Աճի մտածողություն</b>	ԱՃԻ1. Սեփական կամքին հավատալը և բարձր ինքնագործունեությունը	Ինքնագործունեությունը Արտադրողական ձախողումը
	ԱՃԻ2. Միայններից սովորելը և հետադարձ կապի՝ իբրև աճի հնարավորություն խրախուսելը	
	ԱՃԻ3. Առավել խորը փորձագիտացման և ընկալման համառություն	
	ԱՃԻ4. Ներկայիս սեփական ուժեղ և թուլկողմերի ըմբռնում	
	ԱՃԻ5. Ուսուցումից հաճույք ստանալը և ցկյանս ուսումնառող դառնալը	

# 21 -րդ դարի կրթության կոչեր

Պատմական իներտությունը եղել է քաղաքականության մակարդակում կարևոր որոշիչ գործոն կուրիկուլումի մշակման համար՝ հատկապես հաշվի առնելով մարդկային դինամիկան: Համակարգային մակարդակում քաղաքականության մշակման տեսակետից հարկ է նշել, որ այս հարցում շատ երկրներ բախվում են քաղաքական բնականոն ցիկլային անկայունություններին: Հավակնոտ նորարարությունների զարգացմանը խոչընդոտում է շարունակականության պակասը՝ այդպիսով չհեռացնելով հնացած մոտեցումները: Ինչ վերաբերում է մարդկային դինամիկային, ապա այստեղ որոշումները հաճախ կայացվում են ոլորտային փորձագետների կողմից՝ իրական աշխարհի պահանջներից (և այդ ոլորտի իրական կիրառողներից) մեկուսացման պայմաններում, ուստի հիմնականում աստիճանական (և թերևս գերգործընկերային) բնույթ են կրում: Ահա այստեղ է *Ուսումնական ծրագրերի վերամշակման կենտրոնի (CCR) իրավասությունների խորը արժեքը. այն անկախ է տեղական քաղաքականությունից և զերծ է կողմնակալ մոտեցումներից, դոգմաներից ու «խմբակային մտածողությունից»:*

Աշխարհում կրթական բարեփոխումների մեծ մասը կենտրոնացած են «Ինչպես»-ի վրա, ինչը բավական գովելի է: Սակայն շատ քիչ է արվում «Ինչ»-ի համար: Կրթությունը մեծ կարիք ունի 21-րդ դարի սովորողների և հասարակությունների կարիքներին հարմարեցված նորարարական ծրագրի. *Արդյո՞ք կրթությունը բավականաչափ արդիական է այս դարի համար: Արդյո՞ք մենք սովորողներին կրթում ենք լինել ունիվերսալ մի աշխարհում, որն անդադար նոր մարտահրավերներ է նետում:*

CCR-ը դնում է «ԻՆՉ պետք է սովորեն ուսանողները 21 -րդ դարի համար» հիմնարար հարցը և բաց կերպով տարածում է իր առաջարկություններն ու շրջանակները համաաշխարհային մակարդակով: CCR-ը միավորում է հասարակական կազմակերպություններ, **իրավասություններ**, ուսումնական հաստատություններ, կորպորացիաներ և ոչ առևտրային կազմակերպություններ՝ ներառյալ հիմնադրամները: [Միացե՛ք մեզ](http://www.curriculumredesign.org) այս հուզիչ ճանապարհորդության մեջ:

Չարլզ Ֆադել  
Հիմնադիր և Նախագահ  
Ուսումնական ծրագրերի վերամշակման կենտրոն  
[www.curriculumredesign.org](http://www.curriculumredesign.org)



In Memoriam: Ramez Der Markarian